

ՋՐԻ ՊԱՋՏԱՄՈՒՆՔ

Հայաքնակ շատ գաւառների նման Լօռում ևս մինչև այժմ դեռ մնում են նախկին ջրապաշտութեան հետքեր, դեռ ևս կան ջրեր, որոնց ժողովուրդը դիմում է ա. դանազան հիւանդութիւններից բժշկուելու կամ անասուններին բժշկելու, ր. որդի ունենալու, գ. սակաւակաթ կանանց կաթն աւելացնելու, դ. երեխաները շուտով ոտք ելնելու և ե. աքտերը մորեխից և դանազան միջատներից պաշտպանելու համար:

Պէտք է ասել, որ բացի հաւատի նեարդային հիւանդութիւնների վրայ արած բարեբար ազդեցութիւնից, այս սուրբ համարուած ջրերը մեծ մասամբ հանքային լինելով բուժում են կաշու հիւանդութիւններ:

Այսպիսի աղբիւրներից յիշենք ամենանշանաւորները. Արգուի գիւղի Օձի պոքտի ¹⁾ աղբիւրի մօտ առաւելապէս բորոտ և առհասարակ հիւանդ մարդիկ ուխտ են գալիս, մօմ վառում, խունկ ծխում և այգ ջրով լողանում, խմում կամ վերքերին քսում, որ առողջանան:

Նոյն այս ջրի մէջ միւրիշ ազ աւելացնելով տալիս են հիւանդ անասուններին, որ առողջանան:

Հայրաթի մօտ, Խէշի-դուռ լեռան վրայ մի աղբիւր կայ «Թնդոց» անունով. այստեղ ևս ուխտ են գալիս, մօմեր վառում, մատաղ կտրում, թէ՛ մարդկանց և թէ՛ կենդանիների համար առողջութիւն հայցելով:

Մեծ Չուլավէր գիւղի Ծակ-Քար ժայռի ստորոտում հանքային ջուր է կաթկաթում. Բորոտները որտ առաջ մօմեր են վառում՝ և ջրից իրենց վրայ քսում, որ առողջանան:

Ուղունլարում, այգլիների մօտ կայ մի «Ջօրաւոր աղբիւր», ուր քոսոտ մարդիկ մօմ են վառում, խունկ ծխում, ջրից վերաները լցնում, որպէսզի բժշկուին:

Ս. Նշանի վանքի մօտ մի քարայրի մէջ մի փոքրիկ աղբիւր կայ, որ կոչւում է «Թնդոց»։ Ընդլ կանայք այս ջրի ա-

¹⁾ Տես Օհան Օձեցու մասին եղած աւանդութիւնները:

առջ մօմ են վառում, այրի անցքով երեք անգամ անցնում, որ երեխայ ունենան: Նոյն անցքով անց են կացնում նաև այն երեխաներին, որոնք ժամանակին ոտք չեն կնում:

Վարդապետներից ոչ հառու Ս. Սարգիս ուխտատեղու մօտ գետնից բլիթով մի աղբիւր կայ, որ *Կաթնաղբիւր* է կոչւում. Կաթ չունեցող կանայք ուխտ են գալիս այստեղ, մօմ վառում, ջրից իրենց ստինքներին քսում, որպէսզի կաթ ունենան:

Երբ «բողոճ» կոչուած միջատը ծծում է ցորենի հասկի հիւթը, գիւղացիները մի քանի ամուրի այդ մարդիկ են ուղարկում «բողոճի ջուր» բերելու: Սա գտնուում է Չարգախլու գաւառում մի այրի մէջ. մի վճիռ աղբիւր է, որ «գոյացել է այրի առաջ թաղուած ճգնաւորի արցունքներից», Անխօս մօտենալով աղբիւրին, մօմեր են վառում, երկրպագում և ջրից վերցնելով վերագառնում, զգուշանալով, որ ջրի սրուակը գետնին չը դնեն, այլ շարունակ իրանց վրայ պահեն, նոյն խիլ քնելիս: Զուրբ բերում, դարձեալ անխօս մօտում են եկեղեցի, դնում սեղանին և աղա քահանան վերցնում է այդ և բոլոր գիւղականների հետ շրջում արտերը, անդաստան կատարում և ջուրը սրսկում արտերին: Իսկոյն «այդ բողոճները կոտորում և կամ թռչում հեռանում են»:

Երբ մօրեխն է կոտորում արտերը, նոյն ձևով գնում Մասիսի վրայից Ս. Յակոբայ աղբիւրի ջրիցն են բերում և անդաստան կատարելով սրսկում արտերին: Իսկոյն երևում են սև ժեռ կոչուած թռչունները, որոնք կոտորում են մօրեխներին:

ԿՐԱԿԻ ՊԱՆՏՈՄՈՒՆՔ.

Կրակապաշտութեան իրր մնացորդ կարելի է յիշատակել հետեւեալները.

1) Տարեմօտին մի ահագին դերան են դնում օջախի մէջ, որ անշիջ վառւում է մինչև Քրիստոսի Ծննդեան օրը, և այս դերանի խանձողները թաղում արտերում, որ կարկուտ չը